ավանդատնով եկեղեցիները Կուրթանում, Վարդաբլուր տանող ճանապարհին (Ս. Գևորգ), Գյուլագարակում (Տորնակ), Ստեփանավանում (Չիչմանիս), որոնք V դարում[96] և առավել ևս VI դարում[97] կառուցվել չէին կարող: Դրանք առաջին եկեղեցական շենքերն էին, որոնք հոգևոր ծառայության պահանջներից թելադրված օժանդակվում էին առանձին հավելվածներով, ավանդատներով:[98]

Երկրորդ խումբն են կազմում Т-ձև բազիլիկները (Վարդաբլուր՝ Ձգրաշեն, Սվերդլով),[99] որոնք զարգացման հաջորդ աստիճանն են և որպես եկեղեցաշինության ամենասկզբնական տեսակներ IV դարի առաջին տասնամյակներից ավելի ուշ թվագրվել չեն կարող: Այս առանձնահատկությունները խիստ բնորոշ ժամանակագրական հատկանիշներ են մասնավորապես IV դարի համար և պետք է հիմք դառնան IV և V դդ. տարբերությունը տեսնելու և հավաստելու համար:

V դարում, երբ մեծ տարածում ստացավ գմբեթը, նման թաղածածկ շենքերի կառուցումը բացառվում էր: Գմբեթը և խաչաձև հատակագծով հորինվածքները, ըստ սկզբնաղբյուրների, մշակվեցին տակավին IV դարում և ամբողջ դարի ընթացքում, հավանաբար կառուցվել են ոչ մեծ չափերով (Շաղատ, Արթիկի Ս. Աստվածածին, ուր խաչաձև կենտրոնագմբեթ հորինվածքը համատեղված է արտաքին սրահի հետ):

Սույն իրողությունները վկայում են այս տարածքում վաղագույն շրջանում քրիստոնեության հաղթականորեն տարածման և դավանական նոր պահանջների համաձայն պաշտամունքային ճարտարապետության նորովի սկզբունքների մշակման ու կիրառման մասին:

Ստեփանավանի շրջանը հարուստ է նաև քաղաքացիական շինություններով (Վարդաբլուրի ամրոցը, Լոռի բերդը, կամուրջներ և այլն):

Ստեփանավանի և Աշոցքի շրջաններից սույն պրակի մեջ մտել են 90 վիմագիր արձանագրություններ, որոնցից անցյալում հրատարակված են եղել 11-ը, որոնք նույնպես զգալիորեն շտկվել կամ լրացվել են:

Նկատենք նաև, որ ինչպես այլ, այնպես էլ Լոռու մարզի բազմաթիվ եկեղեցիներ, աղբյուրներ ու շիրմաքարեր ունեն XVIII-XIX դդ. պատմական որոշակի կարևորության վիմագիր տեղեկություններ, որոնք, ընդունված կարգի համաձայն, չեն հավաքվել-վավերացվել, չհաշված մի քանի բացառություններ:

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ

Գուգարաց աշխարհի հնագույն բնակավայրերից է դեռևս բրոնզեդարից շատ առաջ: Գետալանջի քարանձավային համալիրները տեղաբնիկների կացարան-ապաստարաններ են ծառայել միլիոնավոր տարիներ առաջ: Իսկ վաղ բրոնզեդարյան դամբարաններից ի հայտ եկած մետաղական, ոսկրի գտածոները որոշակի պատկերացում են

---

[96] *Գ. Շախկյան*, Լոռի, 16, 18:

[97] *Մ.Մ. Հասրաթյան*, Տաշիրի սրահավոր միանավ հուշարձանները, «Լրաբեր» հաս. գիտ., 1974, N 3, 41-56: Հեղինակն իր այս կարծիքն ավելի է ամրապնդել Армянская архитектура раннего христианства М., 2000) ծանրակշիռ մենագրության մեջ:

[98] *Ա. Մանուչարյան*, Քննության, 15-26:

[99] Նմանօրինակ շինության վերակառուցման արգասիք է նաև Դորբանտավանքը (Տես Տեղեկագիր, Հայկ ՍՍՌ, ԳԱ, 1956, 59-66):

տալիս տեղի բնակչության մշակութային կյանքի, զբաղմունքի, փոխկապերի, կրոնածիսական պատկերացումների, շինարարական հմտությունների մասին: Այն կարևոր կենտրոնատեղի է եղել նաև մեր դարաշրջանի սկզբում, երբ բնակավայրը գտնվել է ներկա քաղաքի արևմտյան եզրին, հնագույն դամբարանադաշտից ոչ հեռու, ուր այժմ էլ պահպանվում են IV-V դդ. եկեղեցու ավերակները (Չիչմանիս)՝ շրջապատված գերեզմանոցով:

Քաղաքը X-XIII դդ. մտել է Կյուրիկյանների տիրույթների մեջ, այնուհետև անցել է Օրբելյաններին ու Զաքարյաններին, իսկ ԺԵ դ. սկզբում այստեղ բնակություն են հաստատել նաև մահմեդականները:

Ստեփանավանի հայտնի անունը Զալալօղլի է (Զալալի տղա): Զալալյանցն այն կապում է մի խաչքարի հիշատակագրության հետ: Խաչքարը եղել է գետ իջնող ոլորապտույտ ճանապարհի սկզբնահանգույցում, Զալալյանցի ժամանակ՝ ընկած:

«Վերի թաղում, քարափի գլխին բարձրանում է Ս. Աստուածածին սրբատաշ քարից շինուած եկեղեցին» (Լալայան, էջ 355): Գմբեթավոր այս աղոթարանը կառուցվել է XIX դ. երկրորդ կեսում և քանդվել 1930-ական թվականներին:

Քաղաքում գործում է Ս. Սարգիս եռանավ բազիլիկան՝ կառուցված Կյուրիկյանների շրջանում, նորոգված քանիցս, իսկ կրկնահարկ զանգակատունը 1903 թ. է:

984. ԽԱՉՔԱՐ. Ուղղանկյուն խորանի վերից կախված ողկույզներով, ագուցված քաղաքի գործող եկեղեցու արևելյան պատին, արտաքուստ, քիվին, 2 տող.

+ Ի ԹՎԻՍ:Ո.Կ.Զ:ԿԱՉ
ՄԵՑԱՒՍԲ ՀՅԱՍՏԵՂԻՆ

[Ի] ԹՎԻՍ :Ո.Կ.Զ: (1217) ԿԱՉ
ՄԵՑԱՒ ՍԲ ՆՇԱՆՍ ՌՈՂԵՂԻՆ:

Ծանոթ. Եկեղեցու որմերին կան մի քանի բարձրարվեստ խաչքարեր ևս՝ առանց հիշատակագրության: Անձնանունը կազմված է Ռ-1000 և դեղին բառերից և պետք է կարդալ Հազարդեղին: Անվան այս ձևը հանդիպում է նաև Լոռի բերդի մի խաչքարի արձանագրության մեջ:

Կարծում ենք, որ անձնանունը ուղղակի ԴԵՂ է (խմբ.):

985. ԽԱՉՔԱՐ. Գեղաքանդակ, խաչի թագագլխի կողքերին վեցաթև (իրար հագած եռանկյունի) աստղազարդեր, քիվի երկշար հյուսքազարդերի արանքում, 1 տող.

+ ԻԹՎ ԻՍՀԱ ՈՑ:Ո:Ծ: Թ:ՈՐԿԱՉ ՄԵՑԱՒՍՈՒՐ

Ի ԹՎԻՍ ՀԱ[Յ]ՈՑ :Ո:Ծ:Թ: (1210), ՈՐ ԿԱՉՄԵՑԱՒ ՍՈՒՐ[Բ ՆՇԱՆՍ] (կամ՝ խաչս):

Ծանոթ. Այս և համաժամանակյա մի քանի խաչքարեր ի հայտ են եկել 1987 թ. քաղաքի զինվորականների թաղամասում՝ շինարարական աշխատանքների ընթացքում: Արձանագրությունն անավարտ է կամ, թերևս, շարունակությունը եղել է հարակից խաչքարի վրա:

986. Ս. ՆՇԱՆ ՄԱՏՈՒՈ. մուտքի կամարի գլխի քարին, 5 տող.

ՍՈՅՆ ՄԱՏՈՒՈՆ	ՍՈՅՆ ՄԱՏՈՒՈՆ
ՍԲՅ ՆՇԱՆԻՍ ԿԱՌ	Ս|Բ|Ո|Յ ՆՇԱՆԻՍ ԿԱՌ
ՈՒՑԱՒ ԱՐՊԵԱՄ ԳԱԶԻ	ՈՒՑԱՒ ԱՐՊԵԱՄ ԳԱԶԻ
Ո ՉԱՂԻՆԵ|Ա|ՆՑ|ԻՆ| Յ|Ի|Շ|Ա|Տ|Ա|Կ:	Ո ՉԱՂԻՆԵ|Ա|ՆՑ|ԻՆ| Յ|Ի|Շ|Ա|Տ|Ա|Կ:
ԱՄ |8՝7| + ՐՕ,ԶԱ	ԱՄԻ 1871 года:

Ծանոթ. Սաստուռը գտնվում է Ստեփանավան քաղաքից 2 կմ արևմուտք, ունի ուղղանկյուն հատակագիծ, երկթեք ծածկ: Շարված է հղկած տեղական բազալտով, կանոնավոր է հատկապես մուտքը: Մոտի ծառերին դեռևս կախում են զանազան շորեր, քաշկինակներ: Արձանագրությունը վերաբերում է մատուռի վերականգնմանը, որը X դ. ավելի նոր չէ: Գազիռ թերևս գգիր բառն է՝ մատնանշելով Չաղինյանցի պաշտոնը:

Ինչպես տեսնում ենք լուսանկարից և գրչագրից՝ մեկենասի անունը որոշակի կարդացվում է ԳՐԻԳՈՐԻ, իսկ ՅԻՇԱՏԱԿ բառի Յ-ից հետո առկա է փոքր Ի տառը (խմբ.):

987. ԽԱՉՔԱՐ. Չորագլխին, գետ իջնող ճանապարհի եզրին.

Կանգնեցաւ խաչս ի Չալալայ իշխանէն:

Հրատ. Չալալյանց, Ա, 125, «Ազգ. հանդ.», VII-VIII, 354:

Ծանոթ. Հրատարակիչների կարծիքով հենց այս իշխանի որդու (օղուլ) հիշատակին է ավանը կոչվել Չալալօղլի: Չալալյանցի ժամանակ խաչքարն ընկած է եղել, մինչդեռ Լալայանն այն նկատել է կանգնած: Այն չի գտնվել որոնումների ընթացքում և ժամանակն էլ հնարավոր չէ գուշակել:

988. ԽԱՉՔԱՐ. Ստեփանավանից հունաբնակ Արմանիս տանող ճանապարհի եզրին.

Կանգնեաց Գրիգոր Ամիրայ Մամիկոնեանց ի բարեխօսութի իւր:

Հրատ. Չալալյանց, Ա, 126, «Արծագանք», 1895, 14, Լալայան, 356:

Ծանոթ. Չալալյանցը գյուղը կոչում է Եղիտակ, տեքստը տալիս է պատմողաբար, ազատ շարադրանքով, և հայտնում, որ խաչքարը «այժմ էլ խոնարհեալ ի պատուանդանեն»: Լալայանի մոտ գյուղանունը Եղիտանք է, արձանագրությունը՝ համառոտ. Գրիգոր ամիրայ Մամիկոնեան (քաղել է «Արծագանք»-ից): Նրա տեղեկատվությամբ խաչքարը եղել է գյուղ տանող ճանապարհի երկու կողմում տարածված հանգստարանում, որի խաչարձանների «տապանագրերը մեծ մասամբ եղծուած են»: Երբեմնի հայաբնակ գյուղի գերեզմանոցը ոչնչացված է: